ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 75-Ա/2 **31.01.2020թ.**

ԲԵՌԼԻՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ «BERLINALE TALENTS» ՀԱՐԹԱԿԻ 2020 Թ. ԾՐԱԳՐԻՆ «ՎԵՐԱԾՆՎԱԾԸ» ԿԻՆՈՆԱԽԱԳԾԻ ՌԵԺԻՍՈՐ Ջ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝ 2020 թ. փետրվարի 19-28-ը Բեռլինի միջազգային կինոփառատոնի շրջանակներում անցկացվող «Berlinale Talents» հարթակի 2020 թ. ծրագրին «Վերածնվածը» կինոնախագծի ռեժիսոր Ջ. Ավետիսյանի մասնակցությունն ապահովելու նպատակով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել Բեռլինի միջազգային կինոփառատոնի շրջանակներում անցկացվող «Berlinale Talents» հարթակի 2020 թ. ծրագրին «Վերածնվածը» կինոնախագծի ռեժիսոր Ջ. Ավետիսյանի մասնակցության ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1056. Կինեմատոգրաֆիայի ծրագրի» «11005. Աջակցություն կինոարվեստին» միջոցառման համար Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի

նախարարությանը նախատեսված գումարներից (տող՝ «Միջազգային կինոփառատոներին, կինոշուկաներին և կինոնախագծերին մասնակցություն») հատկացնել 317.8 (երեք հարյուր տասնյոթ հազար ութ հարյուր) հազար դրամ՝ Բեռլինի ամենամյա միջազգային կինոփառատոնի շրջանակներում անցկացվող «Berlinale Talents» հարթակի 2020 թ. ծրագրին ռեժիսոր Ջ. Ավետիսյանի մասնակցության ճանապարհածախսը ապահովելու համար:

3. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) գլխավոր քարտուղարին սույն հրամանի 2-րդ կետում նշված գումարը հատկացնելու համար, հրամանի ուժի մեջ մտնելու պահից 15-օրյա ժամկետում կնքել պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր) «Հայաստանի ազգային կինոկենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ:

4. Նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետին

1) հսկողություն իրականացնել պայմանագրի, պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման և բովանդակային հաշվետվության ներկայացման ժամկետի կատարման նկատմամբ.

2) պայմանագրով նախատեսված բովանդակային հաշվետվությունն ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում դրա վերաբերյալ եզրակացությունը տրամադրել ֆինանսաբյուջետային վարչությանը.

3) մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը նախարարության գլխավոր քարտուղարի հաստատմանը ներկայացնել պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրության նախագիծը և բովանդակային հաշվետվությունը:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Խզմալյանին:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

X

Հավելված
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2020 թ_____N _____ հրամանի

ԾՐԱԳԻՐ

Բեռլինի միջազգային կինոփառատոնի շրջանակներում անցկացվող «Berlinale Talents» հարթակի 2020 թ. ծրագրին «Վերածնվածը» կինոնախագծի ռեժիսոր Ջ. Ավետիսյանի մասնակցության

1.	Կազմակերպության անվանում՝	Հայաստանի ազգային կինոկենտրոն ՊՈԱԿ
2.	Կազմակերպության գտնվելու վայր՝	Երևան, Աշտարակի խճուղի 30
3.	Ծրագրի անվանում	Բեռլինի միջազգային կինոփառատոնի շրջանակներում անցկացվող «Berlinale Talents» հարթակի 2020 թ. ծրագրին «Վերածնվածը» կինոնախագծի ռեժիսոր Ջ. Ավետիսյանի մասնակցության ծրագիր:
3.1	Բովանդակություն	«Berlinale Talents» ծրագրի շրջանակներում մի քանի տասնյակ մասնակիցներ հանդիպում են միջազգային կինոարտադրության մեջ փորձառու պրոդյուսերների, դիստրիբյուտորների, սցենարի խորհրդատուների և այլ նեղ մասնագիտական ուղղությունների ներկայացուցիչների հետ, քննարկում հարթակում ընդգրկված նախագծերի, ֆիլմերի առաջխաղացման, զարգացման, տարածման ռազմավարությունները, ինչպես նաև նախագծերի համար կազմակերպված վարպետության դասերի ընթացքում հեղինակներն ու արտադրողները հնարավորություն ունեն քննարկելու նախագծերի բացերն ու միջազգային չափորոշիչներին համապատասխանեցման ճանապարհները: «Berlinale Talents» հարթակում ամեն օր ժամը 10:00-ից մինչև երեկոյան 19:00-ն անցկացվող մասնագիտական դիսկուրսներին կլինեն նաև թիմային աշխատանքներ, քննարկումներ կապված նախագծերի հետ:

		Հայկական «Վերածնվածը» կինոնախագիծը (ռեժ. Ջիվան Ավետիսյան) ընդգրկված լինելով վերոնշյալ հարթակում, կմասնակցի ծրագրով նախատեսված բոլոր հանդիպումներին, ինչպես նաև Talent Market–ում կինոնախագծի պրոդյուսերը հնարավորություն կունենա գտնել գործընկերներ կինոնախագծի զարգացման և իրականացման համար:
3.2	Նպատակ	«Berlinale Talents» հարթակում նախատեսված վարպետության դասերի շնորհիվ զարգացնել «Վերածնվածը» կինոնախագիծը և համարտադրության շուկայում գտնել գործընկերներ:
3.3	Անցկացման ժամկետ	2020 թ. փետրվարի 19-28-ը
3.4	Անցկացման վայր	Բեռլին, Գերմանիա
3.5	Ակնկալվող արդյունքներ	Միջազգային կինոշուկայում գտնել համարտադրող պրոդյուսերներ, ինչպես նաև նախնական վաճառքի գործակալներ և այլ գործընկերներ՝ կինոնախագիծը իրականացնելու համար:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	«Berlinale Talents» հարթակում նախատեսված 10-ից ավելի դիստրիբյուտորական կազմակերպությունների հետ հանդիպումներ և ներկայացված կինոնախագծի տարածման գործակալների մասնակցության պայ-մանավորվածությունների ձեռք բերում: Հանդիպում գերմանացի «Script Doctor» Ժան Վագների հետ՝ «Վերածնվածը» կինոնախագծի զարգացման աշխատանքների քննարկման, սցենարի դրամատուր-գիական կառուցվածքի մշակման համար: «Berlinale Talents» հարթակում ընդգրկված են մոտ 250 մասնակից՝ տարբեր ծրագրերով: